ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 4

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թուրքիայում . . . . . 14 ղուռուշ
Գաւառներում . . . . 20 ղուռուշ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 50 սենթ.

Յայտարարութիւնների վճարը՝
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Հաջորդ « » 2 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏՔ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից ինչքու�է գրեն պարզ, մարուր և անպայման թղթի տուսաքին երեսի վրայ։

2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։

3. Մենք մերժում ենք „Ա՞ի և „Վ՞ի ուղղագրական հերթուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ։

4. Հրատարակուած կարճ յօդուածները չեն վերադարձնում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։

5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի իսկական անուն ազգանունը։

6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից։

7. Հրատարակուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։

8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 ղուռուշ 10 շահի։

№ 4 1912 թ. ՇԱԲԱԹ 10 ՄԱՐՏԻ 1912 թ. № 4

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄԻՏՔ“

Ազգային — Հասարակական — Գրական և Քաղաքական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

1912 թուի համար.

Թաւրիզում տարեկան . . . . 14 ղուռուշ
,, վեցամսեայ . . . . 8 ,,
,, երեք ,, ... 5 ,,
Գաւառներում տարեկան . . . . 20 ղուռուշ
,, վեցամսեայ . . . . 12 ,,
,, երեք ,, ... 7 ,,

Արտասահման

Ռուսաստան . . . . . 4 ռ. 50 կ.
Եւրոպա և Եգիպտոս . . . . 12 ֆրանկ
Տաճկաստան . . . . . 50 ղրուշ
Ամերիկա . . . . . 2 տոլար 50 սենթ

Յայտարարութիւններ ընդունւում են ամեն լեզուներով. յայտարարութեանց համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին՝ (պետիտ) առաջին երեսի վրայ 5 շահի, վերջին երեսի վրայ 2 շահի։ Շարունակական յայտարարութեանց համար առանձին պայման։

Խմբագրի հետ տեսնուել կարելի է, չորեքշաբթի և ուրբաթ օրերից բացի, ամեն օր երեկոյեան ժամը 4-5 իւր բնակարանում, տուն Օհանջանի, Թաւրիզ մէյդանում, Ռուսական հիւպատոսարանին մերձ։

Բաժանորդագին և յայտարարութիւնների վճարն անպայման կանխիկ

Հատավաճառ Թաւրիզում 6 շահի.

Մեր հասցէն Rédaction du journal „Mitk“ Tauris (Perse)
Հեռագրի հասցէ՝ Rédaction „Mitk“ Tauris.

Խմբագիր — Հրատարակիչ
Ալէքսանդր Տէր Վարդանեանց

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒԱԾ ԾՐԱԳՐՈՎ

«Միտք»-ի երկու նախորդ համարներում մենք ամփոփ գծերով տուինք մեր գիտողութիւններն այն մասին, թէ գործունէութեան ո՞ր եղանակը կտանէր մեզ դէպի ուժեղ իշխանութիւն։ Մեր գիտողութիւնները մենք հիմնել էինք արդէն պատմութեան սեպհականութիւն դարձած մի գործունէութեան անկողմնակալ քննութեան վրայ։ Այդ գործունէութիւնը, կխոստովանեն, անշուշտ, հէնց իրենք գործիչները և դիւանի բարտուղարը, եղել է անպտուղ, ընթացել է զիգզակներով, չի ունեցել իր սեռուն նպատակը, ուստի և պատգամաւորներից շատերին մղել է դէպի հրաժարականներ։

Արդ, ինչ կարելի է անել, որ այսուհետև զումարուելիք նոր պատգամաւորական ժողովը լինի օգտաւէտ, գործունեայ և շինարար։

Դորա համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է, որ առաջնորդը իր աջակից սկզբին խորհրդականներով՝ նստաշրջանի հէնց ժողովի բերէ իր որոշ նախագծերը։ Այդ անհրաժեշտ է հէնց նրա համար, որ նոր ժողովը հնի նման չմատնուի անորոշութեան, չտայ իրեն հարց, թէ ո՞րտեղից սկսել, ինչ սկսել և ո՞ւր տանել։

Նախորդ նստաշրջանի պակասութիւնները և անփորձութիւններն արդէն որոշ դաս պիտի տուած լինեն թեմիս իշխանութեան օրնախուռոփի կամ ժողովին խուսափեցնի այնպիսի հարցերի շոշափումից և այնպիսի խնդիրների սեղանի վրայ դնելուց, որոնք իզուր վէճերով պառակտեցին նախկին պատգամ. ժողովը և շատ անգամ էլ թեմակալի իր արարքը և հոգևորականի դերը դարձրին անճահ քննութեան առարկայ։

Օրինակ, ամենամեծ վիճաբանութեան նիւթ է եղել անցեալում այն հարցը, թէ արդեօք պատգամաւորը կարող է պատգամաւոր լինել, եթէ վեց ամիս չի եղել նոյն բնակութեան տեղում։ Երկար վէճերից յետոյ, այդ հարցը լուծուել է դրական մտքով [1], հակառակ կանոնադրութեան պահանջի։ Նոյնպէս հակառակ կանոնադրութեան՝ պակաս տարիքով մարդիկ, ինչպէս և՛ հաշուետու անձինք՝ ընդունուելին իբր պատգամաւորներ ու դարձել միաժամանակ և հաշուառուներ։

Ժողովի զբաղումներն անցեալում պակաս չէր խանգարում ժողովրդի ընտրութեան և կանոնադրութեան պահանջած ընտրական տարբերութիւնը։ Մինչդեռ ժողովուրդը ի վաղուց անտի սովորել է ուղղակի ընտրութեան, կանոնադրութիւնը պահանջում է երկաստիճան կամ պատուիրակների ընտրութիւն, որը չի հասկանում անգամ Թաւրիզը, էլ ո՞ւր մնաց սմեն ինչից անտեղեակ գաւառը։

Կան ընտրական շրջանակներ, որոնք պէտքէ ենթարկուեն փոփոխութեան, կամ՝ չտան պատգամաւորներ և կամ՝ պիտի խառնուեն—միանան այլ շրջանների հետ։

Այսպէս, օրինակ, Սովուչբուլաղ, Արդաբիլ, Մուժամբար և Սուլդուզ, ըստ կանոնադրութեան, ներկայանում են որպէս ընտրական շրջաններ և տալիս են իրենց պատգամաւորները։ Պէտք է փոխել պատգմ. տալու այդ տնարդար որոշումը, որ բաժին է ընկել վերոյիշեալ, գրեթէ, առանց հայ շրջաններին։

Սովուչբուլաղում այժմ կան 2 հայեր և ոչ աներ։ Դեռ բացի այն, որ Սուլդուզը 5 տարուց ի վեր Տաճկական հող է դարձել, ասում են, անգամ չունի 17 տուն հայ և մենք չգիտենք ինչու այդ շրջանը պէտք է պատգամաւոր ունենայ։ Սորանից շատ աւելի պակաս հայերը կան Արդաբիլում, հասկանալի է, որ սա ևս պիտի չտայ պատգամաւոր։ Սովուչբուլաղ, Սուլդուզ և Միանդաբ պէտք է միացնել Մարագին, Մուժամբարը՝ Թաւրիզին և այլն, և այսպէս նոր կազմել պատգմ. շրջանակներ, համաձայն ազգաբնակչութեան որոշ եւ տաճելի թուի։

Ապա նոր պատգմ. ժողովը պէտք է հէնց սկզբից ձեռք վերցնի այն խելառ, անմիտ և կեղծ ազատամտական ցուցամոլութիւնից, որ նախորդը յաճախ երեւան էր բերում և ասում, թէ մենք կապ ու կախում պիտի չունենանք էջմիածնից, կաթուղիկոսից։ Պէտք է հայ համայնքում խորը եւ զօրեղ լինի այն գիտակցութիւնը, որով խրամատում է ցրուած հայութեանկապը էջմիածնի հետ նով«կղերամոլութեան» կարծեցեալ տիտղոս է կպցնում կեղծ ազատամիտների հակառակորդներին, այնպիսին պէտք չէ պատգմ. ընտրուի և նա բարոյական ոչ մի իրաւունք չունի կաթուղիկոսի և էջմիածնի գերիշխանութիւնն ընդունող հայ համայնքի կողմից պատգմ. ընտրուել։ Դա, առնուազն, անբարեխղճութիւն է, իսկ անբարեխիղճ պատգամաւոր ունենալը ծանր վիրաւորանք պէտք է համարել մեր թէ անհատական և թէ ազգային արժանապատուութեան։ Իսկ այդպիսի հեստերի դէմ անողոք ու զօրեղ կռուող պէտք է լինի առաջնորդն զրկի նրանց պատգամաւորութիւնից, ըստ կանոնադրութեան պահանջի։

Ահա այս բոլորը և այլ շատ հարցեր, զորս հանդէս բերած կլինի մեր կեանքի պրակտիկան, իբրև նախապատրաստուած մի ծրագիր, առաջնորդը առաջիկայում պիտի բերի պատգմ. ժողովին և դնի նրան գործունէութեան ուղիղ ճամպռվրայ և ազատի նրան հրերումներից ու ջուր ծեծելուց, որը կազմում էր նախորդ պատգմ. ժողովի յատկանիշը։

Սորանով մենք վերջացնում ենք մեր դիտողութիւնները, որ արել ենք առանց կանխամտածուած մտքերի, առանց անհատական կամ կուսակցական հաշիւների։ Թող ուրեմն կանչուի նոր պատգմ. ժողով, որի համար, անշուշտ, կարող են վերընտրուել նախորդի անդամներից շատերը, անգամ մեր զաղափարական հակառակորդները։ Իսկ այդ ընտրեալները պիտի գան իրական գործ կատարելու «ռինական կազմով՝ առանց իրար հետ անձնական հաշիւներ մաքրելու և թեմի ժողովը ամլութեան դատապարտելու։

Աշխատանք, սրտագին և միաբան աշխատանք, ահա թէ ինչը կկօրացնի մեզ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵՒՆ ԿՈՉԻՄԸ

Թաւրիզի մօտ 200 մեր բաժանորդներից շատերը, որոնց մօտ ուղարկել և բաժնեգին ենք խնդրել, պատասխանել են. «Մեզ դեռ 6-7 համար դուրս գայ

---

[1]) Այն էլ նայելով թէ ով է եղել պատգամաւոր հռչակուածը։ Առ հասարակ օրէնքը օրէնք էր անցեալում, եթէ յարմարւում էր մեծամասնականների գործակցակերպին, իսկ մերժւում և բոլորովին հակառակ ձեով էր պարզուում, երբ այդ օրէնքը խանգարում էր նորա (մեծամասնութեան) կամայականութիւնը։

տեսնենք՝ յետոյ»։ Եւ այս ասողները նրանք են, որոնց համար ոչ միայն 14 զանու, այլ 10 անգամ 114 թուականը ոչ մի նշանակութիւն չունի։ Պէտք է գիտենալ, որ մենք կանխիկ ենք վճարում թղթի, գրաշարի, տպարանի, փոստի ցրիչի և այլնի համար, իւրաքանչիւր համարը մեզ վրայ նստում է 14 թուականից աւելի։ Հասկանալի է, ուրեմն, որ մեր յարգոյ բաժանորդներն էլ կանխիկ վճարմամբ, այլ ևս առանց յետաձգելու, պէտք է մեզ հնար տան՝ անսաթայք թերթի հրատարակութիւնը շարունակելու։ Հէնց առևտրական ասպարիզում չէ՞ որ առանց վճարելու, ոչ ոք ոչինչ չի առնում և չի կարող առնել։

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՉՀԵՐՔՈՒԵՑ

Այս վերջերս Լօնդօնից, անգլիական պառլամէնտի շատ յայտնի անդամներ, պետական գործիչներ, ռկանաւոր եպիսկոպոսներ, մի խօսքով՝ անգլիական ազգի պատկառելի ներկայացուցիչներ այցելութեան էին գնացել Պետերբուրգ՝ ներկայացել Գայսերը, այցելել Ռուսական Դուման և այլ կարգի հաստատութիւններ։ Նոյն պատգամաւորութիւնը անցել էր և Մոսկուա, ուր նոյն չափ շքով ու պատուով ընդունուել էին նոքա, որպէս առաջին քաղաքում։

Ուր և գնացել էին նոքա, ամեն տեղ թողել էին խորը տպաւորութիւն։ Անգլիացիների իւրաքանչիւր մի քալլափոխի, խօսքի, շարժման, հետաքրքրութեան, արծարծած հարցի, ասած ճառերի և այլնի մէջ՝ Ռուսները գտել էին շատ և շատ ուսանելի բաներ, որոնք պակասում են իրենց մէջ։

Ո՞ւր անգլիացիք և ո՞ւր մենք, խորը սրտացաւութեամբ գրել և գրում են Ռուսական յառաջադէմ, պահպանողական և այլ կարգերի թերթերը։ Տարբերութիւնը սար ու ձորի է հասնում։

Եւ Ռուս ազգը բարձրացնելու, նորան իր թերութիւններին գիտակ պահելու և յառաջ մղելու համար, Ռուս թերթերը մի առ մի սկսել են թուել իրենց ազգի պակասութիւնները, հասարակական անպարտաճանաչութիւնը, անհատական և հասարակական բազմաթիւ մոլութիւնները, [թղթախաղ, անբարոյականութիւն, կաշառք...) պետական և հասարակական հիմնարկութեանց հիւանդ կողմերը և այլն և այլն, որպէս զի իրենց ժողովուրդն էլ օրինակ վերցնելով այդ մեծ ժողովրդին—Անգլիացիներին—դառնալ նրանց պէս ճարպիկ, ուսումնասէր, գործնական, ձեռներէց, տոկուն, զոհող և ազգային միութեամբ հզօր մի ժողովուրդ։

Եւ Ռուս հասկացող ուրանիմաց հասարակութիւնը ագահութեամբ լափում էր իր թերթերի սրտացաւօրէն գրուածները, և իր թերութիւնները դարմանելու համար սիրով օգտւում էր նոյն այդ թերթերի դիտողութիւններից ու խրատներից։

Արդ, եթէ մեզնից անսահման ուժեղ, բարձր, զարգացած և յառաջադէմ մի ազգի թերթերը Ռուս մեծ ազգի թերութիւնները չեն քաշւում ասել և բարձրաձայն աղաղակում են, որ իրենք սովորելու և անվերջ սովորելու շատ բան ունին Անգլիացիներից, էլ հասկանալի է, թէ որքան յետ ենք մենք և որքան աւելի շատ սովորելու բան ունինք մենք Անգլիացիներից։

Մեր աշխատակիցներից մէկը կարդալով Ռուսաց թերթերի գրուածները, որոնց մէջ համեմատութեան մէջ էին դրուել Անգլիացիք և Ռուսները, ինքը ևս մտածել էր նման մի զուգակշիռ կազմել Անգլիացոց և Հայերի մասին։ Եւ այդ զուգակշիռը կամ համեմատութիւնը տպուել էր «Միտքի» 3 րդ համարում «Փոքրիկ ֆելիետօն» վերնագրով։

Իհարկէ ինչպէս, ֆելիետօնի հեղինակը, նոյնպէս և խմբագրութիւնը, ոչ ոքի վիրաւորելու համար ասպարէզ չէր եկել, ոչ մի անձի ի նկատի չէր ունեցել, այլ ինկատի էր ունեցել մեր ազգային կամ հասարակական թերութիւնները։ Իսկ այդ թերութիւններից ամենից աչքի ընկնողը թղթախաղն ու ազգային հիմնարկութեանց օգնելուց փախչելն է հայերիս մէջ, որ ուժեղ կերպով դուրս էր բերուած ֆելիետօնում։

Սակայն ի՞նչ էր դուրս եկել այդ բոլորից։

—Այն, որ մի կարգ մարդիկ, ինչպէս ասացին մեզ, ասել էին, «Թուղթ էլ կը խաղանք և գրողի աչքն էլ կհանենք»։

Շատ լաւ։ Դուք չէք ուրանում, որ լիշուած թերութիւնները կան հայերիս մէջ, և փոխանակ աշխատելու, որ այդ թերութիւնները վերանան, դուք դեռ սպառնում էք «Մեր աչքը հանել»։ Դորանով իհարկէ ձեր արածը չմեղմացաւ և չարդարացաւ, այլ եղած թերութիւնների վրայ աւելացաւ մի յանցանք էլ, «աչք հանելու» մտադրական յանցանքը։

Դուք այդ յանցաւորը սպառնալիքով ոչ միայն ճշմարտութիւնը, փաստը չհերքեցիք, այլ հայի յամառութեամբ՝ աւելի ևս խորը մխրճուեցիք այն մոլութեան մէջ, որ վնասակար է նախ հէնց ձեզ համար անձնապէս և ապա՝ վնասակար հասարակական տեսակէտից։

Օտար և կրթուած ազգերը գոհ են լինում, երբ իրենց որևէ թերութիւն են ցոյց տալիս, իսկ դուք շնորհակալ չլինելուց բացի, նորից մի յանցանք էլ էք աւելացնում եղածի վրայ։ Եւ դրա համար էլ հէնց մեզ ասում են «հայ» և դրա համար էլ միշտ մնում ենք յետադէմ, վերէժխնդիր, կրթական գործից փախչող և մեր թերութիւնները շողոքորթողներին փայփայող ու նոյ՝ պէս շողոքորթող։ Անշուշտ, այդ փողը ձերնէ՛ և դուք բոլորովին ազատ էք վարուելու նրանց հետ այնպէս ինչպէս կամենաք։ Մենք, որովհետև այդ համարում ենք արդար և ազնիւ, առաջարկում ենք այդ փողը, փոխանակ թղթախաղում տարուելու, ծախսեցէք ազգի ուսումնարանի, թատրոնի, չքաւորների և աղքատների, գրադարանների և այլ հասարակօգուտ բաների վրայ։

Այդպէս եթէ վարուէք, դուք էլ, մենք էլ և ազգն էլ շնորհակալ կմնանք ձեզնից, որովհետև ձեր արածը լաւ և անմոռանալի բան կլինի։ Իսկ վատ բանի, մոլութեան համար, ոչ միայն ուրիշները, անդամ ինքներդ դժգոհ կմնաք ձեզնից և կզղջաք, երբ արդէն շատ և շատ ուշ կլինի։

Արէք այսօր, վաղը և մի՛շտ՝ մի լաւ բան, և այնուհետև եթէ մեր «աչքն էլ հանէք», էլի մենք չենք դժգոհի։ Չենք դժգոհի, որովհետև ձեզ կորուստների և մոլութեան ճամպից հանելուց բացի, դարձրած կլինինք հասարակութեան բարերարներ, (որոնց յիշատակը չի մոռացուի) և ուրեմն հասարակական յառաջադիմութեան մղիչներ։ Եւ եթէ այդ ճանապարհին կպահանջուի զոհել մեր աչքը, կտանք այդ զոհը սիրով, միայն թէ բարձրանայ, յառաջադիմի և լուսաւորուի մեր խեղճ հայ ազգը, դուք ազատ լինէք կործանարար մոլութիւններից և մեր հասարակութիւնն ունայ բարոյական ու մտաւոր առողջ կազմ։

Ա. Տ. Վ.

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(30 ամեայ յոբելեանի առթիւ)

Դու չգիտես, թէ ինչ վշտեր
Խռովում են սիրող հոգին.
Դու չես տեսնում, թէ ինչ փշեր
Բուն են դրած վարդի միջին (100)։

Ոչքան էլ քաղցր ու հրապուրիչ լինի «երկնային» հրեշտակների անբիծ-անարատ մթնոլորտում ճախրելը, որքան էլ դիւթող—գրաւող այդ «անմահ» էակների սրբազան Սիրոյ խորանում յափշտակուած ծնկաչոք ազօթելն ու զոհաբերութիւնը, այնուամենայնիւ ոչ մի հողեղէնի վիճակուած չէ այդ անճառելի բախտաւորութիւնը։ Պառնասի գագաթն անգամ ստիպուած է թողնել առժամանակ երկնայինը, եթերայինը և հաշիւ տեսնել երկրայինի, իրականի հետ, մանաւանդ այն բանաստեղծը՝ որի շրջապատում, ազգի կամ ժողովրդի կեանքում համատարած փշերի ու տատասկների մէջ տեղ տեղ միայն կարելի է լինում պատահել հոտաւէտ վարդերի, քնքոյշ ծաղիկների։

Սիրած կոյսի գաւառանութիւնն արդեօք, թէ շրջապատի քար սրտերն ու անտարբեր հոգիները, կեղծիքն ու սուտը համակում են բանաստեղծին վշտով ու թախիծով, զուարթ հնչիւնները տեղի են տալիս տխրագին ու վշտալի հառաչների։ Հասարակական կեանքի անարդարութիւններն ու անիրաւութիւնները—

Ուր որ գրկուածը նեգնաւոր բաղդից
Անհետանում է, որպէս մի ճճի,
Ցաղթուած ոսկեզօծ երկաթի բազկից,
Ուր միայն մէկն ծառն երջանկութեան
Բուսնում է տասի աւերակներից,
Ուր մի ժպիտը ծաղկում է միայն
Հարիւրաւորի աղի արցունքից, (33)—

Լցնում են բանաստեղծի սիրտը դառնութեամբ։ Նա կորցնում է մարդկանց մասին ունեցած իր մաքուր, մանկական հաւատը, կտրում քնարի սիրոյ լարը, փլշրում իր փայփայած, սրբազան կուռքը, էլ չի ցանկանում պաշտել ու խնկարկել իր առաջուան աստուածուհուն և ոչ էլ պաշտուել փոխադարձաբար։

«Ինձ մի՛ սիրիր, անբախտ օրիս
Այդ սէրն ինձ չէ խնդութիւն.
Դաժան վշտից խեղդուած հոգիս
Էլ չի առնի յարութիւն» (36)։

Բանաստեղծը պահ մի համակւում է յուռեսեսութեամբ, զգում է, աւելի ճիշտ թւում է նրան, թէ ինքը մենակ է, «խարուած կեանքից», լքուած բոլորից, թւում է նրան, թէ «հոգին արդէն մարել» է, «սիրտը դատարկ է», «ճակատը յոգնած»։ Նա կորցնում է իր ճանապարհը, որովհետև կորցնում է իր ուղեցոյց աստղը, և որպէս մոլորուած, աննպատակ առաջ է շարժւում կեանքում, այդ «վարի անտառում»։

«Ի՞բրև մի նաւորդ ալեաց երեսին
Գնում եմ անոյշ, վշտերից ընկած...
Ես պիտի հասնեմ մի օր փարոսին,
Կեանքի կատաղի հոսանքից փրկուած (95)

Նա ընկնում է ճնշող անորոշութեան, տատանման, երկբայութեան գիրկը, նրա «խղճուկ կեանքը» դառնում է «խառնուրդ սոսկալի մանուկ հաւատոյ, չար երկբայութեան», «նենգաւոր բաղդի խաղալիք», «հողմավար նաւակ ալեծուփ ծովում»։ Նա տեսնում է իր պակերը.—մի երերուն եղեգն - և սարսափում. նրա առջև ծառանում է փիլիսոփայական ինչո՞ւն.

«Ինչո՞ւ ապրեցայ, ինչո՞ւ եմ ապրում
Միտքս չէ՛ կարող տալ ինձ պատասխան (26)։

Եւ այդ ինչուն տխուր ու յոռի մտքեր է զարթեցնում բանաստեղծի հոգում, վատատեսիլ հեռանկարներ բերում նրա աչքի առջև. կեանքը մի դատարկ ու անիմաստ երևոյթ է ներկայանում նրան, չէ որ ամեն ինչ չքանում է ծխի նման, ոչինչ չկայ յաւիտենական.

«Եւ սէր և հրճուանք համայն գեղեցիկ
Զոհ է աւերի և մոռացութեան (91)։

Նրան պատում է դուրեանական յուռեսութիւն—Ողջը լոկ ծաղր է անսիրտ բընութեան։— Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն—Դուրեանի «Ցրտունջք»)։

Այդպիսի վիճակում մահուան ուրուականն է կանգնում նրա առջև. նա ձգտում է դէպի մայր բնութեան ծոցը, կամենում է «հաղորդուել նրա լուռ հանգստեան վսեմ խորհրդին»։ Եւ զարմանալի է, որ բանաստեղծի մուգ աշնան վերջին դեղնած տերևների հետ միասին վերջին հրաժեշտը տար մեզ, եթէ մի ուրիշ սէր, աւելի զօրեղ ու յարատև բանաստեղծի համար, քան կուսի սէրը, ոգևորութեան նոր աղբիւր չհանդիսանար նրա համար և այդ՝ հայրենիքի սէրն էր։

ՀԱՅԵՐԻ ԴԻՐՔԸ ՎՐԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.[1])

Հայերի՝ Վրաց թագաւորութեան ներքին վարչական գործերի վերաբերեալ մատուցած ծառայութիւնները այնքան բազմաթիւ են, որ կարիք չկայ մի առ մի յիշատակելու։ Յիշատակենք միայն, որ արքայական գահակալութեան համար սահմանած նոր կարգը, որ յայտարարուեցաւ ծը-դ դարու վերջում, Իրակլի Բ. նախավերջ թագաւորի հրամանով, կազմուեցաւ ու խմբագրուեցաւ մի հայի ձեռքով, որն անուանւում էր Յովսէփ Ղորղանեանց։ Հայի ձեռքով կազմուած այս նոր սրբենքի համաձայն գահը պէտք անցնէր ոչ թէ հօրից որդուն, այլ թագաւորող տոհմի աւագագոյն զաւակին, այսինքն, առաջ թագաւորի եղբայրներին, յետոյ նրանց որդիներին։ Գահակալութեան նկատմամբ եղած այս վերանորոգութիւնը կարճ ժամանակում ունեցաւ իւր դառն հետևանքները, այսինքն հրատարակութիւնից ուղիղ չորս տարի անցած՝ 1801 թուին, Գէորգի ԺԲ-րդի մահուան օրը թագաւորական ընտանիքում տեղի ունեցան մեծ խառնակութիւնք և երկպառակութիւններ։ Յովսէփ Ղորղանեանցի ձեռքով կազմուած գահակալութեան կանոնադրութիւնը ցոյց է տալիս հայերի խոշոր ազդեցութիւնը նոյնիսկ աքքունական կեանքում։ Այս ազդեցութիւնը Վրաց պատմութեան մէջ ակնյայտնի կերպով նշմարւում է։ Ճշմարիտ է։ Գէորգ ԺԲ. դէպի հայերը վերաբերւում էր անվստահութեամբ, սակայն նրա հայր Իրակլի Բ. գնահատում էր նրանց և շրջապատում էր իրան հաւատարիմ հայերով։ Ժամանակի ընթացքում հայերի ազդեցութիւնն սկսում է թուլանալ։

Վրաց թագաւորութեան մէջ ապրող հայերից շատերը շնորհիւ այն պարագայի որ իրանց անձնական արժանաւորութիւններով ձեռք էին բերել ժողովրդականութիւն ու հռչակ, կարողացան իրանց տոհմի վրայ հաստատել տալ զանազան պաշտօններ ժառանգաբար վարելու արտօնութիւն։ Ամանք էլ ձեռք բերին իշխանական ու ազնուական տիտղոսներ։ Այսպէս Թումանեանց տոհմի նշանաւոր ներկայացուցիչները ձեռք բերին տէրութեան քարտուղարութեան պաշտօնը ժառանգաբար վարելու արտօնութիւնը։ Բեհբուդեան տոհմի ներկայացուցիչներից մէկը պետական գործերում այն աստիճանի յառաջացաւ, որ Թիֆլիսում հաստատուեցաւ, մելիքութեան պաշտօնի մէջ, այսինքն եղաւ քաղաքային վաճառականների ու արհեստաւորների պետ, դատաւոր։ ԺԸ. դարու վերջում Թիֆլիզում յայտնի էր մելիք Դարչիա Բէքուկովը։ Վրաց թագաւորները տեսնելով հայերի անկեղծ հաւատարմութիւնը՝ առաջ քաշեցին նրանց վարելու զինուորական պատասխանատու պաշտօններ, պահպանելու գահն ու կառավարութիւնը։

Հայերի նշանակութիւնը Վրաց թագաւորութեան մէջ զինուորական և վարչական ասպարէզներում չէ վերջանում միայն այն ծառայութիւններով, որ մենք մասամբ յիշատակեցինք այստեղ։ Հայերն ունէին գործունէութեան իրանց յատուկ

[1]) Տես «Միտք» № 3

ղրջանը. նրանք կազմում էին Վրաստանում այսպէս ասած tiers-état. երրորդ դասակարգ, որին Վրացիներից պատկանում էին միմիայն մի քանի անհատներ: Հայ ազգաբնակութիւնը Վրաստանում բաժանուած էր երկու մասի – քաղաքային ու գիւղական համայնքների: Գիւղական համայնքն զբաղւում էր, ինչպէս և վրացի գիւղացիները, երկրագործութեամբ ու գինեգործութեամբ, իսկ քաղաքային համայնքը՝ առևտրական ձեռնարկութիւններով: Վրաց բարձր դասակարգն զբաղուած էր կամ պատերազմական գործերով կամ թէ երկրագործութեամբ ու այգեգործութեամբ: Մինչդեռ տէրութեան յարաճուն կարիքներն երևան բերեցին ազատ մարդկանց մի դասակարգ, որ կարողացաւ միջնորդի դեր խաղալ արտադրողների և սպառողների մէջ, զբաղուել երկրի բնական հարստութիւնների մշակութեամբ և շրջանառութեան մէջ դնել իր ունեցած տրամադրութիւնը՝ պարտք տալով Վրաց թագաւորներին պետական հասարակական պէտքերի համար: Վրաստանի համար այսպիսի մի շատ կարևոր վաճառականական գործառնական դասակարգ հանդիսացան հայերը, որ կազմում էին համքարութիւններ բոլորովին նման միջնադարեան համքարութիւններին: Այս համքարութիւնները գտնւում էին «քաղաքի ուստաքաշու» կամ «մելիքի» հայեցողութեան տակ, որ միշտ ներկայ էին լինում վաճառականների կամ արհեստաւորների համար կատարուելիք դատաստանական գործերին: Մելիքներից շատերը նշանակւում էին մեծ լիազօրութիւններով և կոչւում էին «մելիք-մամասախլիս» այսինքն քաղաքագլուխ: 1799 թուին, Թէյմուրազ թագաւորի ժամանակ Թիֆլիզի «մելիք մամասախլիսը» էր Աւետիք անունով մէկը: Հայերը շնորհիւ իրանց եռանդի, զօրեղ ձգտումների դէպի բարձր նպատակները, և չունենալով ոչ մրցութիւն վրացիների կողմից, կարողացան Վրաստանում ձեռք բերել խոշոր հարստութիւն, մանաւանդ Թիֆլիզում, Գորիում, Մցխէթում, Թելաւում, Ախալցխայում և այլն:

Ռուսերէնից Լ. Գէորգեան

ՕԴԱՁԱԽՐԻ (ԱԷՐՈՊԼԱՆԻ) ԱՊԱԳԱՆ

Սկսա թէ ինչ է գրում մի նշանաւոր անգլիացի այս մասին National Review թերթի մէջ.

Օդը այն վտանգաւոր, խարդախ տարրը չէ ինչպէս շատերը կարծում են: Մարդիկ երկիւղով սկսեցին օդագնացութիւնը պնպիսի մեքենաներով, որոնց վրայ վստահութիւն չունէին ամենևին: Բայց շուտով իրենք ևս զարմացած մնացին, թէ ինչքան հեշտ էր օդում թռչելը: Այժմ արդէն իւրաքանչիւր փորձուած օդագնաց յաւ մեքենայով ամենայն ապահովութեամբ օդի մէջ թռչել կարող է, իսկ մօտիկ ապագայում անկասկած աւելի ու աւելի ապահով պիտի դառնայ օդագնացութիւնը:

Ապագայիտեղափոխութեանց գլխաւոր միջոցը պիտի լինի օդագնացութիւնը: Օդաձախրը շարունակելով կատարելագործուել այնպէս, ինչպէս այսօր տեսնում ենք աչքի առաջ, պէտք է լինի շատ ապահով, բանի շատ աժան և չափազանց մեծ արագութեամբ: Ոչինչ երկրի կամ ծովի վրայ չի կարողանայ համեմատուել նորա հետ: Նա կդառնայ անկախ ամէն պատահարից և կանցնի ծովերի վրայով մի երկրից միւսը, ընծայելով ճանապարհորդներին ամենայարմար ուղեգնացութեան յարմարագոյն հաճոյքը:

Արդէն իսկ առաջնակարգ ուժի տէր օդաձախրով կարելի է եղել մի ժամում մօտ 100 մղոն (անգլ.) կտրել: Բայց այդ դեռ սկիզբն է և պէտք է յուսալ, որ երբեմն չի տևի և մենք ականատես կլինինք թէ ի՞նչպէս օդաձախրը մի ժամում 150–200 մղոն ճանապարհ է կտրում: Այդ կախուած է միայն մեքենայի ամուր կազմութիւնից և շարժիչ ուժի զօրութիւնից:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՈՒԻԼԵԼՄ ՇԷՅՔՍՊԻՐ

1564 1616

Աշխարհի մեծագոյն և տիեզերական հռչակ ունեցող բանաստեղծներից Ուիլեամ Շէյքսպիրն է միայն, որ վերջերումս կատարուած գիտական քննութեան մէջ 21 ձայնով «նոր ժամանակի ամենամեծ բանաստեղծը» հրատարակուելու պատուին արժանացել է, ուստի արժէ ծանօթանալ այդ չնաշխարհիկ մարդու պատմութեան և գործունէութեան: Նա ծնուել է 1564-ին Սթրաթֆօրտում և մի բարեկեցիկ Անգլիացու որդի էր, սակայն դեռ իւր մանկութեանը նրա հայրը աղքատանալով՝ պատանի Ուիլեամի դաստիարակութիւնն էլ ընդհատուեց, այնպէս որ նա շատ քիչ Լատիներէն և աւելի նուազ Յունարէն էր իմանում, բայց Անգլիերէնի մէջ քաջ էր: Շնորհիւ իւր տաղանդի և ապրելով մի համայնքում ուր ինքնակրթութիւնը հնարաւոր էր, նա կարողացաւ մի զարգացած մարդ դառնալ: Բոլորովին անապացոյց է այն զրոյցը երբեմն նա Զարլէօտի անտառներից եղջերուներ գողացած լինի, շատ հաւանական է սակայն որ նա իւր պատանեկութեան ատեն յոռի և կրքոտ է եղել: Դեռ հազիւ 15 տարեկան նա ամուսնացել է Աննա Հաթեվէյի հետ, որը 26 ամեայ էր և, ըստ երևոյթին, նրանց այդ կապակցութիւնը բարեյաջող ու երջանիկ չեղաւ: Հէնց այդ պատճառով կամ թերևս աղքատութիւնից ստիպուած և կամ մղուած իր տաղանդաւորութիւնից որ նրան դէպի թատերական բեմը առաջնորդում էր, Շէյքսպիր թողեց իւր բնագաւառը 1586–7-ին և Լօնդօնում հաստատուեց և դերասան ու պիեսաներ գրող դարձաւ. այդ ժամանակ նա 22 տարեկան էր: Նրա գործունէութիւնը կարելի է պէրիօդների բաժանել: Առաջին ժամանակաբաժինը տևում է 1587–1595: Շատ կարելի է, որ նա դեռ Լօնդօն ուղևորուելուց առաջ սկսել էր իւր «Վենիս և Ադոնիս» վերնագրով գործը աշխատասիրել, որը 1593-ին լոյս տեսնելով իւր բանաստեղծական ճոխ և կենդանի պարունակութեամբը մեծ ուշադրութիւն գրաւեց և բարձր շրջանների սիրելին դարձրեց նրան: Ուիլեամեայ այդ կարճ միջոցում նրա բեղմնաւոր միտքը և գրիչը արտադրել են հետևեալ նշանաւոր գործերը:—

«Տիդուս Անդրոնիկուս» և «Հէնրի VI»-Մասն Առաջին, «Սիրոյ Աշխատանքը Կորած է» և «Սխալների Զաւէշտը» որոնց մէջ նա գեղազանց սրախօսութիւն և կատակաբանութիւն է ցոյց տալիս: «Ամառ գիշերուայ Երազը» մի զուտ բանաստեղծական գործ է, որի մէջ կլասիկական լեգէնդան, միջնադարեան յաւերժահարսային աշխարհն ու Անգլիական միմոսային կեանքը լիովին և ֆանտաստիկական գեղեցկութեամբ նկարագրում է: Իտալական Զբոյցի և հմայքի տակ նա գրել է «Վերոնացի Երկու պարոններ»-ը և «Ռոմէօ և Ջուլիէդը», որի մէջ տրագիքական նկարագրութիւնը իւր գագաթնակէտին է հասնում— Դրանցից յետոյ լոյս տեսան սիրային մի քանի թատերգութիւններ, որոնց մէջ նշանաւորներն են «Լուգրեցիայի Առևանգումը» և «Ամեն Բանի Վերջն է գովելի» վերնագրով գործերը: Իսկ հայրենասիրական ոգևորութեամբ գրուած նրա պիէսաներից յայտնի են «Ռիչարդ II» և «Ռիչարդ III»:

Երկրորդ պէրիօդում 1596–1601 Շէյքսպիր արտադրել է 6–7 թատերգութիւններ և մի քանի սօնեթներ: Առաջինների մէջ նշանաւոր տեղ է գրաւում «Վենետիկի Վաճառականը», որ թարգմանուած է հայերէնի և յաճախ ներկայացուած է հայ բեմի վրայ: Մեզ շատ հեռու կտանէ մի առ մի յիշատակել նրա այս պէրիօդում գրած և հրատարակած գործերի մանրամասնութիւնները: Թող ուրեմն անցնենք նրա կեանքին և տեսնենք թէ ինչ յաջողութիւն ունեցաւ նա նիւթապէս այդ պէրիօդի վախճանում: Մենք գտնում ենք նրան այժմ արդէն հարստացած, բախտաւոր, համբաւ և հռչակստացած, սիրուած ու յարգուած՝ հասարակութիւնից: Փոխուած էր, ուրեմն, Շէյքսպիրի կեանքը և նրա միտքն էլ փոխուեց դրա հետ: Նա բարեկամ է դարձել լորդերի և աւագանիների. թագուհին հովանաւորում էր նրան և նա պատկանում էր բոլոր բարձր զրականական ընկերութեան:

(Կը շարունակուի)

Թրգ. Անգլ. Մ. Բաղդ.

ՓՈՔՐԻԿ ՖԷԼԻԵՏՕՆ[1])

ՀԱՅԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՆ

Անգլիացին սառնասիրտ է և միևնոյն ժամանակ կատակների և հաճոյքների սիրահար. նա սովոր է ամեն ինչին սառնասրտութեամբ վերաբերուել, նոյնիսկ մահին, որպէս մի սովորական երևոյթի: Այսպէս օրինակ, միմիայն Անգլիացին կարող է այս բովանդակութեամբ հրաւիրատոմսեր ցրուել:

«Վաղը, ամսիս 3-ին ես պիտի կախուեմ և խնդրում եմ ձեզ պատուէք ինձ Ձեր ներկայութեամբ»:

Մի այլ օրինակ. մօտ ժամանակներումս Լօնդօնի լրագրներում երևեցաւ Էդի Սպենսեր անունով մէկի հետևեալ յայտարարութիւնը:

«Խոնարհաբար խնդրում եմ իմ բոլոր ազգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ ինձ մի շիլինգից աւելի փող պարտք չտալ. որովհետև հաստատապէս վճռել եմ իմ պարտքը չվճարել»:

Մի այլ կատակաբան մի շատ մեծ աֆիշ է բաց թողել թէ՝ «երեք շիլինգ վճարողը կարող է տեսնել մի մարդ, որ այնքան աչք ունի, որքան օր որ տարին ունի»:

Անգլիացին սիրում է «մեծ մեծ կատակներ», իսկ հայը՝ փոքր կատակներ: Հայի տանը որ մէկը մեռնում է, սուգ ու շիւան են գցում, զօռով լաց են լինում. իսկ անգլիացին ամենայն սառնասրտութեամբ հանդիսատես է լինում նոյն իսկ իր հարազատի մահուան:

Անգլիացիք տոկուն և համբերող մարդիկ են: Յիշում եմ Անգլիացու և Ֆրանսացու բնաւորութիւնը բնորոշող մի փոքրիկ պատմուածք: Երկու պրոֆեսորների-մէկը անգլիացի, միւսը՝ ֆրանսիացի—առաջարկում են ուղտի մասին ուսումնասիրութիւն գրել: Ֆրանսիացին մտնում է իր կաբինետը, դուռը պինդ փակում որ իրեն խանգարողներ չլինեն, և մատը ճակատին դրած մտածում է թէ ինչ տեսակ կենդանի պիտի լինի այդ ուղտ կոչուած կենդանին: Իսկ անգլիացին գնում է Արաբիա, ուղտերի հայրենիքը, երեք տարի մնում, ծառայում ուղտերի քարաւանի մէջ և մանրամասն ուսումնասիրելուց յետոյ վերադառնում հայրենիք ու առաջին մրցանակն ստանում:

Անգլիացիները պարծենում են իրենց մայրենի լեզուով խօսել առաջին պատահածի հետ:

Հայն էլ պարծենում է, բայց ինչով նրանով, որ օտարների ներկայութեան նա ամօթ է համարում իր մայրենի լեզուով խօսելը և նոյնիսկ ուրանում է իր հայ լինելը: Եթէ քսան հոգի հայեր լինեն մի տեղ և մի հոգի էլ օտար, բոլորն էլ «օտարի խաթեր» օտարի լեզուով կխօսեն:

Անգլիացիք չափազանց սիրում են իրենց ժողովուրդը, իրենց լեզուն և իրենց հայրենիքը:

Մենք էլ ենք սիրում մեր ժողովուրդը, մեր հայրենիքը, բայց միայն այն դէպքում, երբ որևէ, մանաւանդ փողի, ակնկալութիւն ունինք:

Ռուսաց Կայսր Պետրոս Մեծը ամենամեծ հաճոյախօսութիւնն արաւ Անգլիային ասելով՝

«Եթէ ես Ռուսաց թագաւոր չլինէի, կուզենայի լինել անգլիական ծովակալ»:

Մի անգլիացու հարցրին թէ՝ եթէ անգլիացի չլինէիր, ինչ կուզէիր լինել: Նա հպարտութեամբ պատասխանեց.

—Անգլիացի:

Մի հայի ևս նոյն հարցը տուին: Պատասխանն էր՝

- Ինձ համար ազգութիւնը նշանակութիւն չունի:

Իհարկէ այս վերջի պատասխանը բոլոր հայերի համար չէ, այլ այսպէս կոչուած «ամեն բանից աւարա» անձանց համար, որոնք «խօսքի» մէջ ծայրագոյն ծախակողմեաններ, հակակղերականներ և Մարքսից աւելի Մարքսիստներ են, իսկ գործնականում թունդ հայ մուղսիներ, գաղափարի վրայ թքողներ կամ գաղափարագներ և կլերի փէշից պոկ չեկողներ:

Անգլիացին որ և է գործ սկսելիս կը կշռադատի, կմտածի և ապա կսկսի: Իսկ հայը գործը կսկսի և ապա կսկսի այդ մասին մտածել... բայց արդէն ուշ կլինի. բա՛ չէք լսել, որ ասում է թէ՝ «հայի վերջին խելքն է գովելի»:

Հայը իւրայինների առաջ ոտիւծ է, աղա, օտարների առաջ՝ մուկ ծառայ, լեռտին թուրք ֆառաշի կամ ռուս լակէյի առաջ՝ քծնող. իսկ անգլիացու համար այդ ոչ մի նշանակութիւն չունի և նա բնաւ չի ստորանայ:

Է՜, բաւական է, եթէ ոգսպիսի համեմատութիւններ շատ անենք, վախենում եմ հայի աբուռը գնայ, աւելի լաւ է Ֆելիետօնի ծայրերը կապենք և արա այժմ բաւականանանք սրանով.

Լու.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ 25 Փետրվ.

„Միտք" շաբաթաթերթէ յարգոյ պ. խմբագրին.

Տեսայ „Միտքը", որի մասին գրել էիք: Ծայրէ ծայր ուշադրութեամբ կարդալով կարող եմ միայն համակրութիւնս յայտնել ճեմարտութեան, յառաջադիմութեան եւ աշխատանքի, գաղափարներին ծառայող „Միտքի" նման մի օրգանի:

Սայն երկտողով գալիս եմ յայտնելու նաև, որ ձեր հրաւէրը—տալու թարգմանական լոդուածներ—սիրով ընդունում եմ իմ կողմից:

Վստահ, որ ոչ մի խոչընդոտից չէք վհատիլ, որ մեր հայերիս բաժանորդագին վճարելու ձգձգող և փողից պոկ չգալու ազգեղ ձևերը ձեզ չեն զգուեցնի, որ անսայթաք և անաչառ կերպով առաջ կտանէք ձեր սուրբ նպատակը, ցանկանում եմ կատարեալ յաջողութիւն և խնդրում եմ ընդունէք յարգալից բարեներս:

Ս. Օրդ.

[1]) Տես «Միտք» № 3

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Մարտ 3-ին, Ղարագաղի յայտնի Ռահիմ խանի սրգի յայտնի Բոյուկ խանը եկել էր առաջնորդարան՝ Կարապետ սրբազանի այցելութեան։

Նոյն օրը գիշերուան՝ Արամեան դպրոցի ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ՝ նոյն դպրոցի թատերասրահում, առաջին անգամ Թաւրիզում, մեծ յաջողութեամբ խաղացուեց Շիրվանզադէի «Ներվեանուհի» դրամատ։ Հակառակ սովորութեան, ինչպէս ամֆիշներում էլ յայտարարել էին, առմսակներ ոչ ոքի չէին ուղարկուել։ Ծախսուել էին բոլոր առմսակները, բացի առաջին կարգի 6 առմսակից (առաջին կարգի առմսակները 40 աթոռի էին)։ Սրահը լցուած էր ընտիր հասարակութեամբ։ Այդ օրը եկել էին նաև այնպիսի անձեր, որոնց տարիների ընթացքում չենք տեսնում նման երեկոյթներում։ Ներկայացմանը փայլում էր ծափերով գնահատուած իւր խաղով Արամ. և Ս. Աննայեան երկս. դպրոցների նախկին տան օր. Զարուհի Թորգոմեանը (Արմենուհի), որ հոգաբարձութիւնից նուէր ստացաւ մի գեղեցիկ պատկերակալ (ալբոմ)։ Բէցէնզիան և ծախսերի մանրամասնութիւնը յաջորդիւ։

Գ. Ջիբր. Բուդաղեանը իր նաւային գործերի կարգադրութեամբ Ուլմի ուղևորուելով՝ առաջնորդի խնդրանքը յանձն է առել վերակազմել տեղի կազմուած գործակալական խորհուրդը և կարգաւորել դպրոցները։

Լրացել է Արամեան դպրոցի 60-ամեակը։ Հոգաբարձութիւնը սրբազան հօր բերանացի դիմումներ է արել գլուխ բերել 60-ամեայ յոբելեան։ Հոգաբարձութիւնը պատրաստում է առաջնորդի օժանդակութեամբ քաղաքիս առաջաւոր դասից կազմել մի յանձնախումբ՝ արժանավայել կերպով տօնելու Արարատեանի պատկառելի լուսոյ կեդրոնի պատկառելի յոբելեանը։ Սպասելի է, որ նորա 100-աւոր սաները և հասարակութիւնը ցոյց տան սիրալիր վերաբերմունք։

Մարտ 8-ին, Պարսից Նովրուզի (ուժանորի) շնորհաւորութեան առթիւ առաջնորդ Կարապետ սրբազանը պ. Մելիք Սարգսեանի հետ, առաւօտ. ժամը 10-ին այցելեց Հաճի Շօջա-էդ-Դովլին։

Նոյն օրը ժամը $4^1/_2$-ին այցելութեան էին գնացել բժշ. պ. Վահան Գէորգեանը և Աստուր բէգ Միքայէլեանը։

Նովրուզի առթիւ ժամը 5-ին Հաջի Շօջա-էդ-Դովլին ներկայացան Տէր Հմայեակը, Տէր Կարապետեան և Տէր Վարդանեան Այէքսանները։ Փոխն ի փոխ նուագում էին պարսական այգում 3 կինուորական երաժշտախմբեր։

Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը Մարտ 5-ին նախկին հեռագրերի նոմերներով Թէհրանից և Ահարից պահանջեց պատասխան, առաջինից 200 թմն. նպաստի և երկրորդից Իբրահիմ և Հաթամխանների ձերբակալութեան առթիւ։

Հիւպատոս պ. Մելիքը սրբազանին հիւպատոսարանում յայտնել է, որ երկիցս ինքը դիմել է փոխարքային, Արամեան դպրոցի նպաստի մասին, սակայն կանցելարիայից դեռ պատասխանչի ստացուել։ Բարեացակամ հիւպատոսը խոստացել է աշխատել նպաստի ստացման համար։

Եկեղեցու բակում Անոն խանի մարմինը ամփոփելու համար, Թէհրանից ժառանգները հեռագրով խոստացել են տալ 200 թմն.

Հանգուցեալ Յակոբ Բժշկեանը իւր տները (կնոջ մահից յետ) կտակել է Արամեան դպրոցին, որ երկու թաշակաւոր պահուի իր անունով։

Հիւպատոսարանը առաջնորդարանից պահանջել է Լիլաւի ծխատէր Տէր Կարապետի կենսագրութիւնը։

Այս անցած շաբաթ Լիլաւայի հայոց թաղից կարուել է գիշերանց՝ երկու հայի տուն։

Մարտ 5-ից. ինչպէս մեզ ասացին, Թուրք զօրքերին սկսել են մարդիկ առուսպաներ։ Պահանջւում են ռուսադէպ պարսիկներ, իբրև թարգմաններ։

Մեզ հաղորդում են, որ Հաճի Շօջա-Դովլէն, Նովրուզի առթիւ, բանդից արձակել է 10 յանցաւորներ։

Կարապետ սրբազանը մի կարճատեւ ցնցում հետ նամակագրութեան մէջ է, որ Նախավկայի հոգերը տայ նրան շահագործելու։

Առաջնորդարանի ծանուցած պատուիրակների ընտրութիւնը, անցեալ կիրակի, Լիլաւայում չկայացաւ։

Գտնուած է հար. բեռը, պարսիով երկրագնդի վրայ անյայտ տեղ այլևս չի մնում։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Շահսեվանները կրկին Մուղանից ըսկսել են տպատակել ռուսական սահմանները։ Նրանց դէմ թէ՛ այստեղից և թէ՛ Կովկասից ուղարկուել են զօրեղ զօրախմբեր։

Մարաղա

Հանգուցեալ Մարգար Աւագեանի կնոջը բաժին տալ չտալու համար մեծ վէճ է առաջացել հոգաբարձու և Ցանկահպատակների աւագ պ. Իվան Յովհաննիսեանի և ռուսական ագենտ պ. Զ. Մ. Սգարեանի միջև։ Մանրամասնութիւնը յաջորդիւ։

Մարաղում ալիւրի լիտրը՝ ծախւում է 4 զր. 8 շհի. հայած իւղի լիտրը 30 զր. չամիչի լիտրը՝ 6 զր. 10 շահի։

Մօտերս Դուխարլուից եկած մի պարզոն մեզ հաղորդեց, որ տեղի հայոց եկեղեցու ծառերը թուրքերը հանում և գերեզմանատան հողերն էլ գրաւում են։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թերթերը հաղորդում են, որ էքս Շահն արդէն դարձել է Օդեսսա, որտեղից մտադիր է գնալ Անգլիա և բնակուել այնտեղ։

Լսում ենք, որ Հաճի Շօջա-էդ-Դովլի ձիաւորները դրաւել են Զէնջանը։

ԱՐՏԱՓԻՆ

Իտալական պարլամէնտը շուտով կը բացուի։ Հայրենասիրական նկատումներով կառավարութիւնը քննադատողներ քիչ կլինեն պատերազմի համար, բայց հարցնողներ կլինեն անպատճառ, թէ ինչո՞ւ մի եւրոպական բանակ, որ զինուած է եւրոպական կատարելագործուած զէնքերով և պատերազմական բոլոր պիտոյքներով՝ չի կարողանում մի յառաջադիմութիւն անել Տրիպոլսում մի խումբ թուրքերի և մի բուռն Աբարների դէմ, որոնցից շատերը կէս զինուած և կէս քաղցած են։ Իտալական զօրքերի ընդհանուր հրամանատարի կարծիքով յաջողութեան համար հրեք բան է հարկաւոր, «զգուշութիւն, աւելի զգուշութիւն և էլի աւելի զգուշութիւն»։ Բայց «զգուշութիւնն» էլ սահման ունի։ պատերազմի մէջ քաջութիւնն էլ գործ է տեսնում։

Առ այժմ եւրոպական պետութիւններից ոչ մէկը չի միջամտի, որ պատերազմը վերջանայ, և չեն էլ միջամտելու, մինչև որ կռուող կողմերից մէկը կամ միւսը միջամտութիւն չխնդրէ պաշտօնապէս։

Գենեռալ Կանեանի կառավարութեան վատահութիւնն ունենալով՝ վերադարձել է Տրիպոլիս, ուր մեծ պատերազմի պատրաստութիւն տեսնելուց բացի, ծրագրում է ամեն կողմից փակել ճանապարհները, որոնցով կարող են պատերազմական պաշար ստանալ տաճիկները։

Խմբագիր — հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԱԳԱԶԻՆԸ ՊԱՐԻԶԸ"

Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Ամեն շաբաթ ստացուում են Եւրոպական առաջնակարգ ֆաբրիկաներից ամենաճոխ նորութիւններ կալանթերիի և արդ ու զարդի վերաբերեալ։

ՏԻԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ — պալտօներ, մահմար. շալ և բատիստ, կարուած և կիսակար բլուզներ, իւպկաներ և ամեն չափի կորսէթներ։

ՊԱՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ — սէզօնի և կիսասէզօնի պալտօներ 50—120 դրան. կոստիումներ 70—120 Ղրն. բրդէնկօթ 60 դրն.-ից, շալվար 14—35 դրն. ֆանթէզի ժիլէթներ 17—45 դրն. շապիկների, բօլէրի, մանշէթների և քրավատների մեծ քօլէքցիա։

ՏՂԱՆՆԵՐԻ ԿՕՍՏԻՈՒՄՆԵՐ 4—10 տարեկան 20—35 դրն.

ԱՂՋԻԿՆԵՐԻ ԶԳԵՍՏՆԵՐ 3—10 տարեկան 25 - 60 դրն.

Գլխի սանդրների և սարքերի, բեղիքիլների. փօրտմանների և պայուսակների մեծ քօլէքցիա, խաչեր, խաղալիքներ ամեն տեսակի և ամեն արժէքի. լիքօրի կարնիվիւրներ, սեղանիկներ թէյի և պապիրոսի համար ծալովի, փէջէնների, կանֆէթի և վարէնների հրաշալի վազեր. երեխաների ծալովի կառքեր և աթոռներ. սեղանի կլիօնկա արշինով և հատով, ամեն յայնքի և կլիօնկա կրծկալ երեխաների. սենեակի և կօրիդօրի համար լինօլէում։ Ցառաջիկայ սէզօնի օյմացու հրաշալի կտորներ և բլուզացու։

ԹԷՍԲԻԷՏԷԹ կանացի մահմար և մետաքս գլխարկների, որոնք վաճառուում են սովորականից 50 % զեղչով. տևում է միայն 15 օր, շտապեցէք օգտուել հանգամանքից։

Գաւառներից պատուէրներ կընդունի և ամենայն խնամքով կկատարի և քանակութեան համաձայն արժէքներ կտայ։

ՄԱՆՈՒԿ ՄԱԶՄԱՆԵԱՆԵՐԸ ԵԿ.

ԿԱԼԲԱՍ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Ալէքսանդրապօլում և Թիֆլիսում յայտնի մեր պատրաստած և մեծ ընդունելութիւն գտած կալբասով։ Թաւրիզում (Դալա թաղում) արդէն բացել ենք գործարան, որտեղից ամեն օր պատրաստուում և արտադրուում են միանգամայն թարմ կալբաս. սալդիսոն, սասիսկա, վիչինա եւ այլն։

Ունինք Ռուսաստանում պատրաստուած ամեն տեսակի խմիչքներ շափազանց մատչելի գներով, որպիսիք չէք գտնի ոչ մի մագազինում։ Ունինք իսկական կախեթու և այլ տեսակի ընտիր գինիներ, որոնք չեն ծախւում Թաւրիզի գինիների առասպելական թանկ արժէքներով. թարմ գարեջուր և ամեն տեսակի ռուսական զակուսկեղէններ։ Ծախւում են և կրիբինեներ, ժան սարդինները։ Եկէք և գնեցէք թարմ, ժան և ընտիր ապրանքներ և դուք մեզ չէք մոռանայ։ կալբասի ռուսական ֆունտը 30կ. (33 շահի). մեր գործարանը լուսանկար Ստեփան Ստեփանեանի նոր խանութներում. Գ. Միլիոնի տան մօտ. բողոքականների աղօթարանիկողք ին։ Ունինք շիրբաթի իւղ գրվ. 2զ. 10 շհ. և կոնսերվներ։

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՄԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Ամեն մրցումից վեր են և չափազանց ճաշակաւոր Գերմանիայից նոր ստացուած մեր գարնանային վերարկուները, տղամարդկանց վիզիտկաները, Ֆանտազիայ ժիլետները, ամառային ժակետները և երեխաների հագուստները ու գլխարկները։ «Գարուն»-ին դիմողները գոհ պիտի մնան։ «Գարուն»-ում ժան գնով կարելի է ձեռք բերել կանացի շալեր և սպիտակեղէններ, դպրոցական աղջիկների հագուստի կտորներ և այլն։

ԳՈՒՐԱՆ[1]

Մուհամմէդի Գուրանին հայերէնը լոյս տեսաւ Վառնայի «Իրաւունք» տպարանէն։

Գինն է 2 բուբլի կամ 5 ֆրանկ

Նոյն տպարանէն կստացուին նաև հետևեալ գրքերը.

Թիապարտը. Ա. Բ. և Գ. մասերը ամբողջ 3 ֆր.
Կարմիր ժամուց. հայ իրական կեանքէ 1 ֆր.
Կարիպ Ախպեր հայ վէպ լոյժ շահեկան 1 ֆր.
Ազատ Երգարան. հին և նոր ազգային երգեր 1 ֆր.
Նէտա. Գուլկարաց նախկին վիճակէն. 50 սանթիմ
Գուլկարաց պատմութիւն մինչև մեր օրերը 50 սանթ.

Փոխարէնը ղրկել ռուսական թղթադրամ այս հասցէով

Imprimerie «Iravounk» Varna Bulgarie

1) Պարսկերէնում և Արաբերէնում արտասանւում է «Ղուրան»։ Ծ. խմբ.

ԹԱՒՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Վերսկսուել է երթևեկ և գիշերօթիկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր առ. ժ. 10—12.

Այն աղքատները, որոնք պ. Բայլարբէգուց վկայական կունենան, կը բժշկուեն ձրի։

Հիւանդանոցի կառավարիչ բժիշկ
Վահան Գէորգեան

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ *Больница*

Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно.

Завѣдующій больницей докторъ
В. Н. Говорковъ.